Կոմիտաս

Արշակ Չոպանյանին (1908, 23 դեկտեմբեր, Ս. Էջմիածին)

Սիրելի՛ Չոպանս,

Ինչպէս երևում է՝ տաք տեղ ես գտել. հը՞, գործերն ու քոյրերն ի՞նչ են անում, դու ինքը զինքդ ինքեանց զինքեանց հանդիսացուցի՞ր...

Մենք բոլորս էլ լաւ ենք և քեզ սիրալիր բարևներ ենք ուղարկում առաջիկայ տօների եւ Նոր տարուան առթիւ:

Այ թէ այնպէս անէիր, որ մնայիր մինչև զատիկ, ու գայի քեզ մի պինդ պսակէի...

Մինաս Բերբերեանն ասում էր, որ քո խաթեր համար չորս անգամ, հակառակ ուսուցիչների տրտունջներին, քննել են Կարախանեան Հայր Ներսէս Վարդապետի ազգականին և չորս անգամն էլ գտել են բոլորովին անպատրաստ մի քանի առարկաներից, այնպէս որ այդ յառաջադիմութեամբ անհնարին է ներկայ տարին ընդունելը:

Ուղտն եկաւ ունքերը փրստած այսպէս՝ գիտե՞մ...

Շատ բարև հարցանողներին և քեզ էլ մի ջերմ պագ ինքը զինքիցս:

Քոյդ Կոմիտաս

Յ.Գ. Յարգելի Կարագեաններին յարգանացս հաւաստիքը: